

Նոյն ժամանակները Հռոմէն մեկնած եւ Անքոնա հաստատուած էր՝ կոլոտ պատրիարքի աշակերտներէն Ղազար Անմարմին, Եպիսկոպոսն Տրապիզոնի, ինչպէս վերը գրեցի, եւ 1766էն ի վեր նոյն տեղ կաթողիկեայ Հայոց հոգեւունն ու եկեղեցին ապրելով՝ վախճանած է 18 փետր. 1783ին (Հ. Ղ. Ալիշան, Սիսական, Վենետ. 1893, էջ 452): Խոսքով վարդապետ (Ցանկ Առաջնորդաց... Տրապիզոնի, Երեւելք, 1901 թ. 4630—4), Ղազարի եւ Տրապիզոնի նախորդ հայ կաթողիկեայ առաջնորդներու վրայ հազիւ անցողակի, եւ այն՝ սխալ ակնարկուած թիւներ կ'ընէ:

Վերը յիշեցի Ստեփ. Վ. Աբրահամ 13 փետր. 1773ին առ Սարգիս Արքեպ. գրած նամակը, որուն մէջ կը յիշուի թէ Գաղատիոյ Առաջնորդն ալ միտք ունի Հռոմ փախչելու: Այս միջոցին կ'երեւայ թէ Գաղատիոյ առաջնորդն էր Ստեփան Վ. որ արդէն 1763ին առաջնորդ էր (Դիւան Գ, էջ 123 եւ այլն): Հաւանական է որ ասիկայ կոլոտի աշակերտն ըլլայ (տես կոլոտ, էջ 71): Կոլոտի աշակերտն էր նաեւ Ադամ Վ., որ ինչպէս Յարութիւն Պետանեանի վերն յառաջ բերուած (28 Հոկտ. 1772) ընդարձակ նամակին մէջ կը յիշուի, 1772ին Իսմայիլայէն Պոլիս եկաւ: Ադամ Վ. արդէն 1751ին Արքեպ. եւ Առաջնորդ էր Խրիմու, որ նորոգեց Ս. Խաչ աթոռանիստ վանքը: (Տես արձանագրութիւնը՝ Բժշկեան Հ. Մ., Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետ.)